«28» 09 2021թ.

ք. Գյումրի

Արձանագրություն թիվ 2

Նիստը կայացել է 2021թ. սեպտեմբերի 28-ին:

Նիստին ներկա էին ծնողական խորհրդի 22 անդամներից 22-ը:

Օրակարգում՝

Շիրակի մարզի «Գյումրու N 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդների զարգացման ծրագրերի քննարկում և քվեարկություն:

Ծնողական խորհրդի նախագահ Ա.Կարապետյանը իր ելույթում նշեց, որ ի կատարումն ՀՀ Կառավարության 2010 թ-ի մարտի 4-ի N319-Ն որոշման 13-րդ կետի՝ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի մրցույթ հայտարարած հաստատության ծնողական խորհրդի անդամները լսելու են տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդների ներկայացրած դպրոցի զարգացման ծրագրերը, որից հետո տեղի է ունենալու փակ քվեարկություն:

Հավակնորդներից Լիանա Դերենիկի Գալստյանը հայտարարեց ինքնաբացարկ:

Զարգացման ծրագրի ներկայացման համար հավակնորդ Հայաստան Գագիկի Հովհաննիսյանին տրվեց 20 րոպե:

Հաշվիչ հանձնախմբի անդամներ ընտրվեցին Գոհար Գևորգյանը, Մարինա Վարդանյանը, Քրիստինե Թադևոսյանը:

Անցկացվեց փակ քվեարկություն, որի արդյունքներից պարզվեց, որ հավակնորդը հավաքել է հետևյալ «կողմ», «դեմ» ձայները.

Հայաստան Գագիկի Հովհաննիսյան - 21 «կողմ» ձայն

1 «դեմ» ձայն

Առավելագույն ձայներ հավաքած տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդ Հայաստան Գագիկի Հովհաննիսյանը համարվեց «Գյումրու N 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ծնողական խորհրդի թեկնածու:

«Գյումրու N 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի
ծնողական խորհրդի նախագահ՝ /Ա.Կարապետյան/

Քարտուղար՝ /Հ.Էլոյան/